



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՐԱԿԻ ՄԱՐԶ  
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 52

ք. Մարալիկ

26 ապրիլի 2012 թվական

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Գործարանային փողոցի N 40 հասցեի տան բնակչուհի Մարգարիտ Ասլանի Առաքելյանի 19.04.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանգուցյալ Աշոտ Գրիգորի Առաքելյանի կողմից նախկին Գազարինի 40 (այժմ Հր. Շահինյան 40 Բ) հասցեի հողամասում 1988 թվականին կառուցվել է բնակելի տուն, հացատուն և կաթսայատուն, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.0285 հա հողամաս, ուստի ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հանգուցյալ Աշոտ Գրիգորի Առաքելյանի (մահացած 2011թ.) ք. Մարալիկ նախկին Գազարինի 40, այժմ Հր. Շահինյան 40 Բ հասցեի հողամասում 1988 թվականին կառուցված բնակելի տան, հացատան և կաթսայատան, ինչպես նաև օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.0285 հա հողամասի նկատմամբ գույքային իրավունքները վերականգնել և ճանաչելով նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ